



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

W. S. S. S.

891-71

9-34


19 Nov 2007

ԱՆՅՈՆ ԶԵԽՈԿ

11.11.2007

Գ Ի Մ Ա Կ

Թարգմ. Յարութիւնի Կասեանի



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան Կ. Մարտիրոսիւնցի | Կ. Մարտիրոսիւնցի

Большая Вацковская № 5

1902

891.71  
2-34



Дозволено цензурою, Тифлисъ, 30-го октября 1902 г

## Դ Ի Մ Ա Կ



ատարակաց X-րդ ակումբում  
բարեգործական նպատակով  
տրւում էր զիմակահանդէս,  
կամ ինչպէս տեղացի օրի-  
որդներն էին անուանում—  
«բալ-պարէլ»:

Պիշերուայ ժամի 12-ն  
էր: Սուանց զիմակների՝  
չբարձրող ինտելիգենտները, թո.ով հինգ հոգի, ընթեր-  
ցարանում մեծ սեղանի շուրջը նստոտած էին և քը-  
թերն ու միրուքները լրագրների վրայ կուացրած,  
ոմանք կարդում էին, ոմանք նիրհում, և մայրաքա-  
ղաքի լրագրի տեղական թղթակցի արտայայտու-  
թեամբ, որ շատ ազատամիտ պարոն էր, — «խոր-  
հում էին»:

Ընդհանուր գահլիճից լսելի էին «Վիւշկի»  
պարերգի հնչիւնները: Դռների մօտերքով անց ու

դարձ էին անում սպասաւորները, ոտներն ուժգնութեամբ թփթփացնելով և ամանները չրխկչրխկացնելով: Իսկ ընթերցարանում տիրում էր խորին լռութիւն:

— Այտեղ, կարծես, աւելի յարմար կը լինի, յանկարծ լսուեց մի ցածր, խուպոտ ձայն, որ թուում էր, թէ վառարանի միջից էր դուրս գալիս. — Բերէք այտեղ, այտեղ, տղայք:

Գուռը բացուեց և ընթերցարան մտաւ մի լայնաթիկունք ցածրահասակ տղամարդ, որ հագել էր կառապանի հագուստ ու գլխարկ՝ սիրամարգի փետուրներով, երեսին էլ դիմակ ծածկած: Նրա յետևից մտան երկու դիմակաւորուած տիկիներ և սպասաւորը՝ ձեռքին մատուցարան: Մատուցարանի վրայ կային մի հաստափոր շիշ լիկեօրով լի, երեք շիշ կարմիր գինի և մի քանի հատ բաժակներ:

— Այտեղ, այտեղ հով էլ կը լինի, ասաց տղամարդը: — Դիր մատուցարանը սեղանի վրայ... նրստեցէք, օրիորդներ. ժը վու պրի ա լես տրիմօնտրան: Իսկ դուք, պարոնայք, քշուեցէք, այտեղ գործ չունէք:

Տղամարդը շուռ եկաւ, վերցրեց սեղանի վրայից մի քանի ամսագրներ:

— Դիր այտեղ. իսկ դուք, պարոն ընթերցողներ, քշուեցէք. ժամանակ չէ այտեղ լրագրներով ու պօլիտիկայով զբաղուելու... շտապեցէք:

— Ես ձեզ կը խնդրէի մի փոքր հանդարտ

լինել, ասաց ինտելիգենտներից մէկը, նայելով դիմակի վրայ ակնոցների միջով: — Այտեղ ընթերցարան է և ոչ թէ բուֆէտ... Այտեղ խմելու տեղ չէ:

— Ինչո՞ւ տեղը չէ. գուցէ սեղանն օրօրում է, թէ՛ առաստաղը կը քանդուի: Զարմանալի է. բայց... ժամանակ չունիմ խօսելու, դէն ձգեցէք լրագրները... թէ չէ ես ձեզ կը ցոյց տամ, առանց այն էլ շատ խելօք էք և աչքերդ էլ կը փչացնէք, իսկ ամենապլխաւորն այն է, որ ես չեմ ուզում ամեն ինչ այտեղ:

Սպասաւորը դրեց մատուցարանը սեղանի վրայ և անձեռնոցիկը ձգելով թեւին, դուան մօտ կանգնեց: Տիկիներն իսկոյն սկսեցին կարմիրը խմել:

— Եւ ինչպիսի խելօք մարդիկ կան, որոնց համար լրագրներն այս խմիչքներից լաւ են, սկսեց խօսել տղամարդը, իր համար լցնելով լիկեօրից: — Իսկ իմ կարծիքով, դուք, յարգելի պարոններ, սիրում էք լրագրներն այն պատճառով, որ ոչինչ չունիք խմելու համար: Ճիշտ եմ ասում, հա՛, հա՛... կարդում են, լաւ, բայց ինչի՞ մասին է գրած այդտեղ: Գու՛, պարոն ակնոցաւոր, ինչ եղելութեանց մասին ես կարդում. հա՛, հա՛, հա՛... դէ, շպրտիր, հերիք քրքրես, լաւ կը լինի, խմես:

Ապա նա տեղից բարձրացաւ և խլից լրագիրն ակնոցաւոր պարոնի ձեռքից: Սա գու՛նատուեց, ապա կարմրեց և շփոթուած սկսեց նայել միւս ինտելիգենտներին — նրանք էլ սրան:

— Գուք ձեզ մտանում էք, ողորմած պարոն, գայրացաւ նա: — Գուք ընթերցարանը դուքան էք դարձնում, դուք թոյլ էք տալիս ձեզ անկարգութիւն, խելով լրագրներն ուրիշի ձեռքից: Ես չեմ թոյլ տալ: Գուք չը գիտէք, թէ ում հետ գործ ունիք, ողորմած տէր, ես բանկի դիրեկտոր ժեստեակովն եմ:

— Թքել եմ, թէ դու ժեստեակովն ես, իսկ քո լրագրին, այ թէ ինչ պատիւ է հարկաւոր... ասաց նա և լրագիրը պատառոտեց:

— Պարոնայք, սա ինչ բան է, — մրթմրթաց ժեստեակովը թալկանալով — սա շատ տարօրինակ է, ա... սա մինչև անգամ գերբնական է...

— Նրանք նեղացան հն, ծիծաղեց մարդը, քնն, վախեցայ, ծնկներս դողում են: Ահա թէ ինչ, յարգելի պարոններ: Հանաքը մի կողմը թողնենք, ինձ հաճելի չէ ձեզ հետ խօսել... Ռրովհետև ես ցանկանում եմ մենակ մնալ օրիորդների հետ այստեղ և ցանկանում եմ այստեղ ինձ բաւականութիւն պատճառել, ուստի խնդրում եմ չը հակաճառել և դուրս գնալ... Համեցէք, պարոն Բելբուխին, դուրս գնալ շների ու խոզերի մօտ. ինչ ես մուտք քարշարի, ասում եմ դուրս ել, ուրեմն դուրս ել. շուտով, արագութեամբ, թէ չէ տես, բարի սհաթ չէ, մէկ էլ շնքակոթիդ եկաւ:

— Այսինքն ինչպէս թէ —, հարցրեց Սիբոտակի Սուգի գանձապահ Բելբուխինը կարմրելով և ուսերը

վեր քաշելով: — Ես մինչև անգամ չեմ հասկանում... մի ինչ որ յանդուզն ներս է ընկնում այստեղ և... յանկարծ այսպիսի բաներ:

— Այդ ինչ խօսք է — յանդուզն, գոռաց սիրամարզի փետուրներով ծածկուած գլխարկով մարդը բարկանալով և բռունցքը զարկելով սեղանին, այնպէս որ մատոցարանի վրայ բաժակները թռչկոտացին. — ում ես ասում. դու կարծում ես, որ եթէ ես դիմակաւորուած եմ, ուրեմն դու կարող ես ինձ գանազան խօսքեր ասել: Այ դու սխտոր: Գուրս գնա, քանի որ ասում եմ. բանկի դիրեկտօր, կորիւր ջհանգամի գոռը: Բոլորդ դուրս ելէք, այնպէս որ այստեղ ոչ մի ըմբօստ չը մնայ, հայրն, խոզերի ու ջրների մօտ կորէք:

— Իէ լաւ, մենք հիմա կը տեսնենք, ասաց ժեստեակովը, որի ակնոցները մինչև անգամ քրտնել էին գայրոյթից: — Ես ձեզ կը ցոյց տամ. էյ, կանչիւր այստեղ հերթապահ վերակացուին:

Մի րոպէից յետոյ մտաւ փոքրիկ շիկահեր վերակացուին:

— Խնդրում եմ ձեզ դուրս գնալ, սկսեց նա, - այստեղ խմելու տեղ չէ, համեցէք բուժէտը:

— Գու ո՞րտեղից լոյս ընկար, հարցրեց դիմակաւոր պարոնը, ես քեզ կանչեցի:

— Խնդրում եմ չը դուրս տաք գլխից, այլ դուրս ելէք:

— Գլտես ինչ, սիրելիս, ես քեզ տալիս եմ մի

րոպէ միջոց... Որովհետեւ դու հսկողն ես և զլիաւոր անձը, ուստի այս արտիստներին թւերից բըռնիր և դուրս տար. իմ օրիորդներին չէ դուր գալիս, որ այստեղ ուրիշ կողմնակի անձինք կան... սրանք ամաչում են, իսկ ես իմ փողի զօրութեամբ ցանկանում եմ, որ նրանք լինեն բնական դրութեան մէջ:

— Ակներև է, որ այս հայվանը չէ հասկանում, թէ խրճիթում չէ ինքը, բացականչեց ժեստեակօվը, կանչեցէք Յւստրատ Սպիրիդօնիչին:

— Յւստրատ Սպիրիդօնիչ, թնդաց ամբողջ ակումբը. հրտեղ է Յւստրատ Սպիրիդօնիչը:

Ծերունի Յւստրատ Սպիրիդօնիչն ուստիկանական հագուստով չը յապաղեց երևալ:

— Խնդրում եմ ձեզ այստեղից դուրս ելնել, խըրոխտաց նա, իւր ահռելի աչքերը չռելով և շարժելով սրած բեղերը:

— Սա որ վախեցրեց, ասաց դիմակաւորն և հըռհըռաց բաւականութիւնից. — Հը, Հը, վախեցրեց, լինում են և այսպիսի կրքոտներ. բեղերը՝ ինչպէս կատուի բեղեր, աչքերն էլ չռած, Հա՛, Հա՛, Հա՛:

— Խնդրում եմ զլիսից մի դուրս տար, ամբողջ ուժով գոռաց Յւստրատ Սպիրիդօնիչն և դողաց. — դուրս կորիր, ես կը հրամայեմ քեզ դուրս խրկեն:

Ընթերցարանում աներևակայելի աղմուկ բարձրացաւ: Յւստրատ Սպիրիդօնիչը, կարմրած, ինչպէս խնցղետին, գոռում էր ոտները գետին զարկելով: Ժեստեակօվը գոռում էր. Բելբուլինը գոռում էր.

դուռում էին և բոլոր ինտելիգենտները, բաց բոլորի ձայները ծածկում էր դիմակաւորի ցածր, խեղդուած բասը: Չնորհիւ բնգհանուր իրարանցումի պարերը ընդհատուեցան և հասարակութիւնը դահլիճից ընթերցարան իուժեց:

Յւստրատ Սպիրիդօնիչն ազդեցիկ լինելու համար կանչեց բոլոր ուստիկաններին, որոնք ակումբումն էին գտնուում և նստեց արձանազրութիւն կազմելու:

— Կրէր, գրէր, — ասում էր դիմակաւորը, մատը նրա զրջի տակ դնելով. Հիմա ինչ պիտի լինի ինձ թշուառիս հետ. խեղճ իմ գլուխ: Ինչո՞ւ էք խեղճ որբուկիս կործանում: Հա՛, Հա՛, Հա՛, յետոյ ինչ, պատմատ է արձանազրութիւնը, բոլորն ստորադրեցին: Իէ, Հիմա նայեցէք... մէկ... երկու... երեք...

Մարդը բարձրացաւ տեղից, ձգուեց իր ամբողջ հասակով և պոկեց զէմքից դիմակը: Բանալով իւր հարբած հրեսն և նայելով բոլորին, հրձուելով իւր արած էֆէկտով, նա ընկաւ բազկաթոռի վրայ և ուրախ-ուրախ քրքջաց: Յիրաւի, որ նա անսպասելի տպաւորութիւն արեց: Բոլոր ինտելիգենտները շըփփօթուած իրար նայեցին և գունատուեցին. միքանիւններն էլ սկսեցին ծոծրակները քորել, տեսնելով, որ մի յայտնի մարդ յանկարծ մեծ լիմարութիւն է արել:

Արբեցողի դերում բոլորը ճանաչեցին տեղացի միլիօնէր Ֆաբրիկանտ տոհմական պատուաւոր քա-

դաքացի Պետտիգորովին, որ յայտնի էր իր թէ կրու-  
ուասիրութեամբ, թէ բարերարութեամբ և թէ, ինչ-  
պէս յաճախ ասում էր տեղական թերթում, լու-  
սաւորութիւն սիրող մարդ:

— Ի՞նչ է, կը հեռանա՞ք թէ ոչ, հարցրեց Պե-  
տիգորովը ըոպէական լուսթիւնից յետոյ:

Ինտելիգենտներն առանց խօսք անգամ ասելու,  
լուռ, ոտների ծայրերի վրայ քայլելով, դուրս գնա-  
ցին ընթերցարանից. իսկ Պետտիգորովը նրանց յե-  
տեից գուռը փակեց:

— Չէ՞ որ դու գիտէիր, որ սա Պետտիգորովն  
է, փոքր ինչ յետոյ դարձաւ սպասաւորին Յետրատ  
Սպիրիտօսիչը կիսաձայն, թափահարելով նրա ուսը,  
որ գիտէ էր բերում ընթերցարան. — ինչո՞ւ էիր լը-  
ռում:

— Չը հրամայեց ասելու:

— Չը հրամայեց ասելու... անիծուածիդ որ մի  
ամիս կը նստեցնեմ մութ նկուղում, այն ժամանակ  
կ'իմանաս— «Չը հրամայեց ասելու»-ն: Կորիր...  
Իսկ՞ դուք, պարոնայք, ահագին աղմուկ բարձրա-  
ցրիք, դարձաւ նա ինտելիգենտներէն, — միթէ չը  
կարողացաք տասը ըոպէ ընթերցարանից դուրս ել-  
նել. դէ հիմա մարսեցէք: Է՛հ, պարոններ, պարոն-  
ներ... լաւ չը վարուեցիք, Աստուած վկայ:

Ինտելիգենտներն ընթերցարանից դուրս ելան  
այլալուծ, տխուր, իրար հետ շշնջալով և իբրև  
յանցաւոր՝ նախազգալով սպառնացող չարիք... Նը-

րանց կանայք և աղջիկներն իմանալով, որ Պետտի-  
գորովը «վերաւորուած» է և բարկացած, լուեցին ու  
սկսեցին ցրուել իրանց տները: Պարերն ընդհատ-  
ուեցան:

Փամի երկուսին միայն Պետտիգորովը դուրս ե-  
կաւ ընթերցարանից: Նա հարբած էր և օրօրում  
էր աջուձախ: Մտնելով դահլիճ, նա նստեց օբկեստրի  
մօտ. երաժշտութեան ազդեցութեան տակ սկսեց նրբել,  
ապա գլուխը խոնարհեց ու խումփաց:

— Մի նուագէք, նշան արին մեծաւորներն ե-  
րաժիշտներին. — Սո՛ւս, Եգօր Նիլիչը քնած է...

— Կը հրամայէ՞ք ձեզ տանել տուն, Եգօր Նի-  
լիչ, հարցրեց Բելբուխինը, կուանալով միլիօնէրի  
ականջին:

Պետտիգորովն յանկարծ շրթունքներն այնպէս  
շարժեց, որ, կարծես, թշի վրայից ուզում էր ճանճ  
բռնել:

— Կը հրամայէ՞ք արդեօք ձեզ տանել տուն,  
կրկնեց Բելբուխինը, — գուցէ կը ցանկաք, որ կառք  
բերենք:

— Ըբբ՛, ո՛ւմ... դու... Ընչ ես ուզում...

— Ձեզ տուն տանել... ժամանակ է...

— Տո՛ւն, ուզում եմ... տարրը...

Բելբուխինն ուրախութիւնից փայլեց և սկսեց  
բարձրացնել Պետտիգորովին: Վրայ վագեցին և միւս  
ինտելիգենտները, հաճութեամբ ժպտալով, բարձրա-

ցրին տոհմական պասուաւոր քաղաքացուն և զգուշութեամբ զրին կառք:

— Սյապէս ապշեցնել ամբողջ բազմութիւնը կարող է միայն արտիստը, տաղանդը, խօսեց Փետտեակովը, նստեցնելով նրան կառք. — Ես իսկ հիացած եմ, Եգոր Նիլիչ, մինչև այժմ ծիծաղում եմ... Հա՛, Հա՛, Հա՛. իսկ մենք տաքանում ենք, իրար հնք անցնում, Հա՛, Հա՛, Հա՛, հաւատում էք, որ թատրոններում էլ այսպէս չեմ ծիծաղել... կօմիկութիւնն անսահման է. ամբողջ կեանքումս պէտք է չիշեմ այս երեկոն:

Պետտիգորովին ճանապարհ ձգելով, ինտելիգենտները հանդարտուեցան և զուարթացան:

— Ինձ ձեռք տուեց հրաժեշտի ժամանակ, գուշութեամբ լի խօսեց Փետտեակովը. — նշանակում է, որ չէ բարկացել...

— Աստուած տայ, վրայ բերեց Եւստրատ Սպիրիդօնիչը. — թէև անպիտան, անօրէն մարդ է, բայց բարեգործ էլ է... չի կարելի նրան վրդովել...



Գ Ի Ե Ն Ի 5 4 0 Գ.

«Ազգային գրադարան»



NL0316727

12.647